

Բանասիրական ֆակուլտետի դեկանի 2015թ. հաշվետվություն

Հաշվետու ժամանակաշրջանում բանասիրական ֆակուլտետը բակալավրիատի կրթության ծրագրեր է իրականացրել հետևյալ մասնագիտությունների գծով.

«Հայոց լեզու և գրականություն» - առկա և հեռակա համակարգեր

«Ռուսաց լեզու և գրականություն» - առկա և հեռակա համակարգեր

«Անգլերեն լեզու և գրականություն» - առկա և հեռակա համակարգեր

«Լրագրություն» - առկա և հեռակա համակարգեր

«Թարգմանչական գործ» - առկա համակարգ

Մագիստրատուրայի կրթության ծրագրեր իրականացվել են հետևյալ մասնագիտությունների գծով.

«Հայոց լեզու և գրականություն» - առկա և հեռակա համակարգեր

«Ռուսաց լեզու և գրականություն» - առկա համակարգ

«Անգլերեն լեզու և գրականություն» - առկա համակարգ

Բանասիրական ֆակուլտետն իր գործունեությունն իրականացնում է համալսարանի և ֆակուլտետի կանոնադրությունների հիման վրա՝ հենվելով ՀՀ կրթության մասին օրենքի, ՀՀ կրթության և գիտության նախարարությունից ստացած հրահանգների ու որոշումների, ինչպես նաև համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորատի, ուսումնական վարչության և գիտական մասի որոշումների հիման վրա:

Ֆակուլտետի գիտամեթոդական խորհուրդն աշխատում է ուսումնական գծով պրոռեկտորի կողմից նախապես հաստատված աշխատանքային պլանով՝ ֆակուլտետը սպասարկող բոլոր ամբիոնների համագործակցությամբ:

Բակալավրիատի առկա ուսուցման համակարգի առաջադիմությունը կազմել է 93 իսկ երկրորդ կիսամյակինը՝ 95,5 տոկոս: Հեռակա համակարգում այդ ցուցանիշները եղել են համապատասխանաբար 75,5 և 80,5 տոկոս:

Մագիստրատուրայում առաջադիմությունը ավելի բարձր է՝ 97 և 98 տոկոս:

Ներկայացնեն ավարտական որակավորման քննությունների արդյունքները.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ 2014-2015
ՈՒՍԱՐԿԱ 4-ՐԴ ԿՈՒՐՍԵՐԻ
ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ
«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն

| | Առարկան | Ուս. քանակ կը | Գերազ. (A-, A, A+) | | լավ (B-, B, B+) | | բավարա p (C-, C, C+) | | անբավարար | | Չի ներկայացել | |
|---|-----------------------|------------------|--------------------|---|-----------------|----|----------------------|----|-------------|---|---------------|---|
| | | | քանակ ը | % | քանակ կը | % | քանակ կը | % | քանակ կը | % | քանակ կը | % |
| 1 | Հայոց լեզու և գրակ. | 4 (1+3) | 0 | 0 | 1 | 25 | 3 | 75 | 0 | 0 | 0 | 0 |
| | Մանկավարժ. ՀԼԴՄ, ՀԳԴՄ | 2 (1+1) | 0 | 0 | 1 | 50 | 1 | 50 | 0 | 0 | 0 | 0 |

«Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտություն

| | Առարկան | Ուս. քանակ ը | Գերազ. (A-, A, A+) | | լավ (B-, B, B+) | | բավարա p (C-, C, C+) | | անբավարար | | Չի ներկայացել | |
|---|------------------------|-----------------|--------------------|----|-----------------|----|----------------------|----|-------------|---|---------------|---|
| | | | քանակ կը | % | քանակ կը | % | քանակ կը | % | քանակ կը | % | քանակ կը | % |
| 1 | Ռուսաց լեզու և գրական. | 4 | 1 | 25 | 0 | 0 | 3 | 75 | 0 | 0 | 0 | 0 |
| | Մանկավարժ. ՌԼԴՄ, ՌԳԴՄ | 5 (4+1) | 1 | 20 | 3 | 60 | 1 | 20 | 0 | 0 | 0 | 0 |

«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտություն

| | Առարկան | Ուս. քանակ ը | Գերազ. (A-, A, A+) | | լավ (B-, B, B+) | | բավարար (C-, C, C+) | | անբավարար | | Չի ներկայացել | |
|---|-----------------|-----------------|--------------------|------|-----------------|------|---------------------|------|--------------|---|---------------|---|
| | | | քանակ ակը | % | քանակ ակը | % | քանակ ակը | % | քանակ ակը | % | քանակ ակը | % |
| 1 | Անգլերեն լեզու | 8 | 7 | 87,5 | 1 | 12,5 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | Մանկավարժ. ԱԼԴՄ | 11 (8+3) | 2 | 18,2 | 5 | 45,5 | 4 | 36,3 | 0 | 0 | 0 | 0 |

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԵՌԱԿԱ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ 2014-2015
 ՌԻՍՏԱՐՎԱ 5-ԸՂ ԿՈՒՐՍԵՐԻ
 ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ
 „Հայոց լեզու և գրականություն,, մասնագիտություն

| | Առարկան | Ուս. քանակը | Գերագ. (A-, A, A+) | | լավ (B-, B, B+) | | բավարար (C-, C, C+) | | անբավարար | | Չի ներկայացել | |
|---|------------------------------|-------------|--------------------|-----|-----------------|------|---------------------|------|-----------|-----|---------------|---|
| | | | քանակը | % | քանակը | % | քանակը | % | քանակը | % | | |
| 1 | Հայոց լեզու և գրականություն | 31 (24+7) | 0 | 0 | 8 | 25,8 | 20 | 64,5 | 3 | 9,7 | 0 | 0 |
| 2 | Մանկավարժություն, ՀԼԴՄ, ՀԳԴՄ | 31 (24+7) | 3 | 9,7 | 7 | 22,6 | 21 | 67,7 | 0 | 0 | 0 | 0 |

„Ռուսաց լեզու և գրականություն,, մասնագիտություն

| | Առարկան | Ուս. քանակը | Գերագ. (A-, A, A+) | | լավ (B-, B, B+) | | բավարար (C-, C, C+) | | անբավարար | | Չի ներկայացել | |
|---|------------------------------|-------------|--------------------|-----|-----------------|------|---------------------|------|-----------|------|---------------|---|
| | | | քանակը | % | քանակը | % | քանակը | % | քանակը | % | | |
| 1 | Ռուսաց լեզու և գրականություն | 26 (24+2) | 2 | 7,6 | 3 | 11,5 | 18 | 60,4 | 3 | 11,5 | 0 | 0 |
| 2 | Մանկավարժություն, ՌԼԴՄ, ՌԳԴՄ | 25 (24+1) | 1 | 4 | 7 | 28 | 17 | 68 | 0 | 0 | 0 | 0 |

„Անգլերեն լեզու և գրականություն,, մասնագիտություն

| | Առարկան | Ուս. քանակը | Գերագ. (A-, A, A+) | | լավ (B-, B, B+) | | բավարար (C-, C, C+) | | անբավարար | | Չի ներկայացել | |
|--|---------|-------------|--------------------|--|-----------------|--|---------------------|--|-----------|--|---------------|--|
|--|---------|-------------|--------------------|--|-----------------|--|---------------------|--|-----------|--|---------------|--|

| | | | | | | | | | | | | |
|---|------------------------|------------|--------------------------|----------|-------------------------------------|----------|-------------------------------------|----|---|---|--------------------------|----------|
| | | <i>ակը</i> | <i>քանակ</i> <i>ը</i> | <i>%</i> | <i>քա</i> <i>նա</i> <i>կը</i> | <i>%</i> | <i>քա</i> <i>նա</i> <i>կը</i> | | | | <i>քան</i> <i>ակը</i> | <i>%</i> |
| 1 | Անգլերեն լեզու | 14 | 2 | 14,3 | 5 | 35,7 | 7 | 50 | 0 | 0 | 0 | 0 |
| 2 | Մանկավարժություն, ԱԼԴՄ | 14 | 5 | 35,7 | 2 | 14,3 | 7 | 50 | 0 | 0 | 0 | 0 |

„Լրագրություն,, մասնագիտություն

| | <i>Առարկան</i> | <i>Ուս. քանակը</i> | <i>Գերազ. (A-, A, A+)</i> | | <i>լավ (B-, B, B+)</i> | | <i>բավարար (C-, C, C+)</i> | | <i>անբավարար</i> | | <i>Չի ներկայացել</i> | |
|---|----------------|--------------------|---------------------------|----------|------------------------|----------|----------------------------|------|------------------|---|----------------------|----------|
| | | | <i>քանակը</i> | <i>%</i> | <i>քանակը</i> | <i>%</i> | <i>քանակը</i> | | | | <i>քանակը</i> | <i>%</i> |
| 1 | Լրագրություն | 6 | 3 | 50 | 2 | 33,3 | 1 | 16,7 | 0 | 0 | 0 | 0 |

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ 2014-2015 ՈՒՍԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն (առկա)

| | <i>Առարկան</i> | <i>Ուս. քանակը</i> | <i>Գերազ. (A-, A, A+)</i> | | <i>լավ (B-, B, B+)</i> | | <i>բավարար (C-, C, C+)</i> | | <i>անբավարար</i> | | <i>Չի ներկայացել</i> | |
|---|-------------------------|--------------------|---------------------------|----------|------------------------|----------|----------------------------|---|------------------|---|----------------------|----------|
| | | | <i>քանակը</i> | <i>%</i> | <i>քանակը</i> | <i>%</i> | <i>քանակը</i> | | | | <i>քանակը</i> | <i>%</i> |
| 1 | Մագիստրոս. թեզի պաշտպան | 9 | 8 | 88,9 | 1 | 11,1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

«Ռուսաց լեզու և գրականությունն մասնագիտություն

| | Առարկան | Ուս. քանակը | Գերազ. (A-, A, A+) | | լավ (B-, B, B+) | | բավարար (C-, C, C+) | | անբավարար | | Չի ներկայացել | |
|---|-----------------------------|-------------|--------------------|-----|-----------------|---|---------------------|---|-----------|--------|---------------|---|
| | | | քանակը | % | քանակը | % | քանակը | | | քանակը | % | |
| 1 | Մագիստրոսական թեզի պաշտպան. | 2 | 2 | 100 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

«Անգլերեն լեզու և գրականությունն մասնագիտություն

| | Առարկան | Ուս. քանակը | Գերազ. (A-, A, A+) | | լավ (B-, B, B+) | | բավարար (C-, C, C+) | | անբավարար | | Չի ներկայացել | |
|---|-----------------------------------|-------------|--------------------|-----|-----------------|---|---------------------|---|-----------|--------|---------------|---|
| | | | քանակը | % | քանակը | % | քանակը | | | քանակը | % | |
| 1 | Մագիստրոսական թեզի պաշտպանություն | 13 | 13 | 100 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

«Հայոց լեզու և գրականությունն մասնագիտություն (հեռակա)

| | Առարկան | Ուս. քանակը | Գերազ. (A-, A, A+) | | լավ (B-, B, B+) | | բավարար (C-, C, C+) | | անբավարար | | Չի ներկայացել | |
|---|----------------------------|-------------|--------------------|----|-----------------|----|---------------------|---|-----------|--------|---------------|---|
| | | | քանակը | % | քանակը | % | քանակը | | | քանակը | % | |
| 1 | Մագիստրոսական թեզի պաշտպան | 22 | 11 | 50 | 11 | 50 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

2014-2015 ուսումնական տարում մագիստրատուրայի ծրագրով առկա համակարգում ուսուցումն ավարտեցին 24 ուսանողներ (9-ը՝ Հայոց լեզու և գրականություն, 2-ը՝ Ռուսաց լեզու և գրականություն, 13-ը՝ Անգլերեն լեզու և

գրականություն մասնագիտություններով): Նրանցից 11-ը բուհն ավարտեցին գերազանց առաջադիմությամբ (3-ը՝ Հայոց լեզու և գրականություն, 1-ը՝ Ռուսաց լեզու և գրականություն, 7-ը՝ Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտություններով):

Հունվարին մագիստրատուրայի ծրագրով հեռակա համակարգում Հայոց լեզու և գրականություն մասնագիտությամբ ուսուցումն ավարտեցին 22 ուսանողներ: Նրանցից 6-ը բուհն ավարտեցին գերազանց:

Բակալավրիատի կրթական ծրագրով ուսուցումն ավարտեցին 97 ուսանողներ (20-ը՝ առկա, 77-ը՝ հեռակա ուսուցմամբ): Նրանցից 3-ը բուհն ավարտեցին գերազանց առաջադիմությամբ (առկա ուսուցմամբ): Ավելացնեմ, որ բակալավրիատի շրջանավարտներից 16-ը երկտարեցիներ էին (7-ը՝ առկա, 9-ը՝ հեռակա համակարգից):

Պետական քնությունների նախագահներ Հ.Մաթևոսյանը, Ա.Զաքարյանը, Ա.Ղազարյանը գոհ էին բակալավրիատի ու մագիստրատուրայի ուսանողների և՛ ավարտական աշխատանքներից, և՛ բանավոր պատասխաններից: «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտության պետական քննական հանձնաժողովի նախագահ Ա.Զաքարյանը իր հաշվետվությունում հատկապես առանձնացրել է մագիստրատուրայի ուսանողների ավարտական աշխատանքների բարձր որակը: Նա նաև դժգոհություն է հայտնել բակալավրիատի որոշ ուսանողների՝ «Ռուս գրականություն» առարկայի պատրաստվածության մակարդակից: Նախագահների կողմից արվել են նաև դիտողություններ, առաջարկություններ, որոնք անպայման հաշվի կառնվեն հաջորդ տարիների պետական քնությունների կազմակերպման ընթացքում:

Նշեմ նաև, որ հաշվետու ժամանակահատվածում հեռակա ուսուցման համակարգի երեք ուսանող անբավարար առաջադիմության պատճառով հեռացվել է բուհից (Ղումաշյան Անուշ - <Անգլերեն լեզու և գրականություն>, 3-րդ կուրս, Պլուզյան Մերի - <Անգլերեն լեզու և գրականություն>, 3-րդ կուրս, Մարտիրոսյան Յողիկ - <Ռուսաց լեզու և գրականություն>, 2-րդ կուրս,):

Ավելացնեմ, որ հետևողական ենք հեռակա ուսուցման ուսանողների հաճախումների հարցում: Քննաշրջանի ընթացքում կատարվում են ամենօրյա ստուգումներ, որոնց նպատակն է հնարավորինս պակասեցնել անհարգելի բացակայությունների քանակը: Խիստ միջոցներ են կիրառվում բացակայող ուսանողների նկատմամբ: Հաշվետու ժամանակաշրջանում առկա համակարգի երկու և հեռակա համակարգի մեկ ուսանողներ բացակայությունների համար ստացել են նկատողություն (Խաչիկյան Անի – <Անգլերեն լեզու և գրականություն>, առկա 2-րդ կուրս, Մանուկյան Կիմա - <Հայոց լեզու և գրականություն>, առկա 4-րդ կուրս, Բագրատյան Ալեքսանդր - <Անգլերեն լեզու և գրականություն>, հեռա 2-րդ կուրս):

Բարձրակարգ կրթություն ստանալու համար բուհի ղեկավարության կողմից ստեղծվում են բոլոր անհրաժեշտ պայմանները: Ուսանողները ապահովվում են

արդյունավետ կրթություն ստանալու բոլոր նախապայմաններով (դասախոսական տեքստեր, հարցաշարեր և այլն):

Քննաշրջանների արդյունքները քննարկվել են ֆակուլտետի գիտատեսականամեթոդական խորհրդում ու համապատասխան ամբիոններում, և առաջիկայում ևս կձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ՝ վիճակը էլ ավելի բարելավելու ուղղությամբ:

Ժամանակը ցույց տվեց, որ ընթացիկ քննությունների համակարգի ներդրումը և դրանց գրավոր անցկացումը իրեն լիովին արդարացրեց: Հատկապես լավ սովորող ուսանողների համար այն լրացուցիչ օգնություն և խթան է՝ կիսամյակային քննություններին լավագույն նախապատրաստվելու և բարձր արդյունքներ գրանցելու գործում:

Բավարար մակարդակով են կազմակերպվել արտադրական պրակտիկաները: Բակալավրիատի ուսանողների մանկավարժական պրակտիկայի համար ընտրվել են՝ *Հայոց լեզու և գրականություն* մասնագիտություն՝ թիվ 1, 2 դպրոցներ և ՎՊՀ վարժարան, *Ռուսաց լեզու և գրականություն* մասնագիտություն՝ թիվ 1, 2, 4 դպրոցները, իսկ մասնագիտություն մասնագիտություն՝ թիվ 1, 4 10, 20 դպրոցները և ՎՊՀ հենակետային վարժարանը, որտեղ կան մասնագիտությամբ որակյալ ուսուցիչներ: *Լրագրություն* մասնագիտության ուսանողները արտադրական պրակտիկան անցկացրել են *Միգ-TV* և *Լոռի* հեռուստաստուդիաներում, *Լոռու մարզ* թերթի խմբագրությունում: *Թարգմանչական գործ* մասնագիտության ուսանողները պրակտիկան անցկացրել են *Լոռի-TV* հեռուստաստուդիայում, *ՎՊՀ խմբագրությունում*, *ՎՊՀ գիտկարֆինետում*, *Կերպարվեստի թանգարանում*: Արտադրական պրակտիկայից առաջ անպայման կազմակերպում ենք խորհրդակցություններ՝ համապատասխան կուրսերի ուսանողների, մեթոդիստների, մանկավարժների և հոգեբանների մասնակցությամբ:

Ինչպես և նախորդ տարիներին, մագիստրատուրայի բաժնի ուսանողների արտադրական պրակտիկան այս ուստարում ևս կազմակերպվեց բուհում: Փորձը ցույց է տալիս, որ մեր ֆակուլտետի մագիստրատուրայի մի շարք ուսանողներ 2-րդ կուրսում արդեն ի վիճակի են բակալավրիատում դասավանդելու:

Դեկանատը հետևողական է վարձավճարները ժամանակին հավաքագրելու գործում: Բայց պետք է նշեն, որ այս հարցում օբյեկտիվ պատճառներով երբեմն ծագում են դժվարություններ՝ հասարակության մի զգալի մասի սոցիալապես անապահով վիճակի հետ կապված: Նման դեպքերում աշխատում ենք գտնել երկկողմանի շահավետ տարբերակներ: Այս հարցում զգալի օգնություն էր, այսպես կոչված, սոցիալաթեթի միջոցով վարձավճարների մուծումը: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ անապահով ուսանողների վարձավճարների զեղչերի համար: Չմոռանանք նաև Էսեֆյան հիմնադրամի երկարամյա շնորհակալ գործունեությունը կարիքավոր, անապահով, նաև սահմանամերձ գյուղերի ուսանողներին հատկացվող ֆինանսական օգնության կապակցությամբ:

Ակնհայտ են ֆակուլտետի հաջողությունները գիտության բնագավառում: Հաշվետու ժամանակաշրջանում լույս են տեսել ֆակուլտետը սպասարկող ամբիոնների աշխատակիցների 2 աշխատություններ, 1 ուսումնական ձեռնարկ-ինքնուսույց

Գուրգեն Խաչատրյան, Պատմություն Խոտինի պատերազմի (Հովհաննես Կամենացի), Երևան, 2015, 197 էջ:

Վանո Եղիազարյան, Մեսրոպ Վայցճորեցի <<Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմի մասին և սուրբ Ներսես Հայոց Հայրապետի պատմությունը>> /Թարգմանությունը գրաբար բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ բ.գ.դ., պրոֆեսոր Վ. Եղիազարյանի/, Վանաձոր, 2015, 201 էջ:

Դավիթ Գյուլգադյան, Գրական արևելահայերենի արտահայտաբանությունը, Երևան, 2015, 296 էջ: (Ուսումնական ձեռնարկ-ինքնուսույց)

Ամբիոնների աշխատակիցները լույս են ընծայել նաև մի քանի տասնյակ հոդվածներ. այդ թվում՝ հայոց լեզվի ամբիոնը՝ 18, գրականության ամբիոնը՝ 19, օտար լեզուների ամբիոնը՝ 4, ռուսաց լեզվի ամբիոնը՝ 7:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետը կազմակերպել է մի քանի միջոցառումներ՝ միջազգային գիտաժողով («Արդի բանասիրության հիմնախնդիրները» նվիրված Ս.Աբեղյանի ծննդյան 150-ամյակին (հայոց լեզվի և գրականության ամբիոններ, 4-5.11.2015), հանդիպում բանաստեղծ Հովիկ Հովեյանի հետ (գրականության ամբիոն, 12.05.2015), սեմինարներ՝ Պարույր Սևակի անավարտ վեպը (գրականության ամբիոն, 12.11.2015), Գնահատումը՝ որպես ուսուցումն ու ուսումնառությունն առավել արդյունավետ դարձնող միջոց (ռուսաց լեզվի ամբիոն, 29.05.2015), Составление и проведение типового урока по практическому курсу русского языка с применением инновационных технологий (ռուսաց լեզվի ամբիոն, 14.10.2015), ատենախոսության քննարկում՝ Ժամանակը Սերո Խանգադյանի պատմավեպերում (գրականության ամբիոն, 12.11.2015), Հայրենական պատերազմի հաղթանակի 70-ամյակին և Շուշիի ազատագրման 23-ամյակին նվիրված հանդիսավոր ցերեկույթ (ռուսաց լեզվի ամբիոն, 11.05.2015):

Ֆակուլտետը ակտիվորեն մասնակցում է նաև բուհական և միջբուհական բազմաթիվ գիտաժողովների, հորելյանական միջոցառումների:

Դեկանատը և ֆակուլտետը սպասարկող ամբիոնները օգնում են ուսանողների ստեղծագործությունների տպագրությանը հանրապետական և տեղական մամուլում, կազմակերպում գիտական և գեղարվեստական գրքերի, թատերական ներկայացումների քննարկումներ, հանդիպումներ գրողների, արվեստի աշխատողների հետ, այցելություններ պատկերասրահներ, Գավառագիտական թանգարան, Հ.Թումանյանի և Ստ.Զորյանի տուն-թանգարաններ: Կազմակերպվում են զեկուցումներ ինչպես համալսարանում, այնպես էլ նրանից դուրս՝ գրողների միությունում, գրադարաններում, դպրոցներում՝ նվիրված հայ գրականության դասականներին ու գրողներին:

Բուհ-դպրոց կապը ամրապնդելու համար ավանդական են դարձել դպրոցականների համար կազմակերպվող օլիմպիադաները: 2015թ. Մարտի 4-6-ը

Լոռու մարզի դպրոցականների համար առարկայական օլիմպիադաներ անցկացվեցին <Հայոց լեզու և գրականություն>, <Ռուսաց լեզու և գրականություն>, <Անգլերեն լեզու> առարկաներից: <Հայոց լեզու և գրականություն> առարկայից մասնակիցների թիվը 103-ն էր, <Ռուսաց լեզու և գրականություն> առարկայից՝ 49, <Անգլերեն լեզու> առարկայից՝ 74: Ուրախությամբ նշեմ, որ ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին ոչ միայն Վանաձորի, այլև այլ բնակավայրերի աշակերտներ (Ստեփանավան, Վահագնի, Եղեգնուտ, Ագարակ, Գուգարք, Ծաղկաբեր, Շահումյան, Կուրթան): Գրանցվեցին բավական հուսադրող արդյունքներ:

2015 թ. մայիսի 14-ին համալսարանում «Ռուսերենի բառակազմությունը թեմայով բաց դաս անցկացվեց որը վարեց ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Կարինե Առուստամյանը: Դասին մասնակցեցին Վանաձորի թիվ 28 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի 12 աշակերտ՝ ռուսաց լեզվի ուսուցչուհի Աննա Մաքոյանի և դասուկ Լիլիթ Ղարադաշյանի ղեկավարությամբ, թիվ 12 հիմնական դպրոցի 3 աշակերտ՝ ուսուցչուհի Լուսինե Հովհաննիսյանի ղեկավարությամբ:

Արդեն մի քանի տարի է, որ Վանաձորի Վազգեն Առաջինի անվան թիվ 8 դպրոցի աշակերտները (տնօրեն Գ.Հովհյան) հանդես են գալիս գեղեցիկ նախաձեռնությամբ. նրանք հավաքում են հայ, ռուս, արտասահմանյան դասական գրողների գրքերից Վանաձորի պետական համալսարանին նվիրելու համար: 2015թ. Փետրվարի 26-ն հերթական նվիրաբերության ընթացքում համալսարանին փոխանցվեցին աշակերտների հավաքած 70 կտոր գիրք:

Հայոց լեզվի և գրականության ամբիոնները մշտապես հանդես են գալիս որպես առաջատար կազմակերպություն՝ գիտական թեզերի պաշտպանության ընթացքում, ինչպես նաև ամբիոնների աշխատակիցները պարբերաբար դառնում են գիտական թեզերի պաշտպանությունների ընդդիմախոսներ (Գ.Խաչատրյան, Մ.Սանթրյան, Վ.Եղիազարյան, Վ.Փիլոյան, Հ.Այվազյան): Գ.Խաչատրյանը ընդգրկված է ՀՀ ԳԱԱ լեզվի՝ գիտական աստիճաններ շնորհող հանձնաժողովի կազմում:

Ֆակուլտետի ուսանողությունը ևս հաջողությունների է հասել: Բավարար մակարդակի վրա են ՈՒԳԸ աշխատանքները: Տասնվեց ուսանողներ ԵՊՀ-ի և ԳՊՄԻ-ի կողմից կազմակերպված միջբուհական գիտական նստաշրջաններում ներկայացրել են իրենց աշխատանքները (Գասոյան Սրբուհի, Հայոց լեզու և գրականություն, 2-րդ կուրս (մագիստրատուրա), Պետրոսյան Գոհար, Հայոց լեզու և գրականություն, 2-րդ կուրս (մագիստրատուրա), Հովասափյան Ռուզան, Հայոց լեզու և գրականություն, 2-րդ կուրս (մագիստրատուրա), Պետրոսյան Շողիկ, Հայոց լեզու և գրականություն, 2-րդ կուրս (մագիստրատուրա), Եղիազարյան Լաուրա, Հայոց լեզու և գրականություն, 2-րդ կուրս (մագիստրատուրա), Այվազյան Հերմինե, Հայոց լեզու և գրականություն, 2-րդ կուրս (մագիստրատուրա), Մկրտչյան Անժելա, Հայոց լեզու և գրականություն, 3-րդ կուրս (մագիստրատուրա, հեռակա), Գասոյան Սիլվա, Հայոց լեզու և գրականություն, 3-րդ կուրս, Հակոբջանյան Մարիամ, Հայոց լեզու և գրականություն, 3-րդ կուրս (մագիստրատուրա, հեռակա), Գրիշկյան Մելինե, Հայոց լեզու և գրականություն, 3-րդ կուրս (մագիստրատուրա, հեռակա), Դիլոյան Կարինե, Հայոց լեզու և գրականություն,

4-րդ կուրս, Վարդանյան Տաթևիկ, Հայոց լեզու և գրականություն, 4-րդ կուրս, Ղուլինյան Լիլիթ, Հայոց լեզու և գրականություն, 3-րդ կուրս, Մահակյան Թամարա, Հայոց լեզու և գրականություն, 4-րդ կուրս, Չատինյան Անի, Հայոց լեզու և գրականություն, 4-րդ կուրս, Մելիքսեթյան Նելլի, Անգլերեն լեզու և գրականություն, 3-րդ կուրս:

2014-2015 ուստարում ֆակուլտետի՝ Շարժունության ծրագրին մասնակցելու նպատակով Էրազմուս Մունդուս փոխանակման ծրագրի IANUS և EMINENCE նախագծերի դրամաշնորհներ ստացած, առկա համակարգի 7 ուսանողներ ուսանելու են մեկնել արտասահման (Խաժակյան Մարիաննա, <Անգլերեն լեզու և գրականություն>, 3-րդ կուրս, Մարոքյան Մանուշակ, <Թարգմանչական գործ>, 3-րդ կուրս, Թումանյան Աննա, <Անգլերեն լեզու և գրականություն> (մագիստրատուրա), 2-րդ կուրս, Հակոբջանյան Հասմիկ, <Անգլերեն լեզու և գրականություն> (մագիստրատուրա), 2-րդ կուրս, Ատամյան Թինա, <Անգլերեն լեզու և գրականություն> (մագիստրատուրա), 2-րդ կուրս, Ղազարյան Ռոզա, <Անգլերեն լեզու և գրականություն> (մագիստրատուրա), 2-րդ կուրս, Բալայան Մարիամ, <Անգլերեն լեզու և գրականություն> (մագիստրատուրա), 2-րդ կուրս,):

2015-2016 ուստարում արդեն երեք ուսանողներ (Սեդրակյան Նորա, <Անգլերեն լեզու և գրականություն>, 4-րդ կուրս, Մաթոսյան Օֆելյա (Սեդրակյան Նորա, <Անգլերեն լեզու և գրականություն>, 3-րդ կուրս, Կոստանյան Թամարա, <Անգլերեն լեզու և գրականություն> (մագիստրատուրա), 2-րդ կուրս) նույն ծրագրով մեկնել են արտասահմանյան բուհերում ուսանելու:

2014-2015 ուստարում Լեհաստանից 1 ուսանող (Դանուտա-Մարիա Ստոյակը) հյուրընկալվեց մեր ֆակուլտետում՝ <Անգլերեն լեզու և գրականություն> մասնագիտության մագիստրատուրայում սովորելու: Ուսանողուհու խոստովանությամբ՝ նա բավարարված էր մեր բուհի ուսումնական գործընթացից՝ և՛ որակական, և՛ կազմակերպչական առումներով: Առիթից օգտվելով՝ հյուրին հնարավորինս ծանոթացրինք նաև մեր երկրի պատմությանը, ժողովրդին, եղավ բազմաթիվ տեսարժան վայրերում: Կարճ ասած, վերադարձել է հարուստ տպավորություններով:

Նախորդ ուսումնական տարվա ֆակուլտետի լավագույն կուրս ճանաչվեց <Լրագրություն> մասնագիտության երրորդ կուրսը: Այս կուրսում սովորում է 10 ուսանող: Բոլորն էլ ակտիվորեն մասնակցում են համահամալսարանական և ֆակուլտետային միջոցառումներին: Այդ կուրսի ուսանողուհի Ավագյան Տատյանան ընտրվել է բանասիրական ֆակուլտետի ուսխորհրդի նախագահ, իսկ Բաղդասարյան Նարինեն վերընտրվել է համալսարանի ուսխորհրդի քարտուղար: Կուրսը աչքի է ընկնում նաև իր բարձր առաջադիմությամբ: Բոլոր ուսանողների առաջադիմությունը 90 տոկոսից բարձր է: Իսկ սա նշանակում է, որ 2016-2017 ուստարում մենք կարող ենք ունենալ միայն գերազանց առաջադիմությամբ բակալավրիատն ավարտող կուրս:

2014-2015 ուստարում ֆակուլտետի մասնագիտությունների գծով ընդունելությունը կազմակերպվեց համալսարանական ծրագրով նոր ուսումնական պլաններով:

Ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդի նիստերում պարբերաբար քննարկվել են նախարարությունից ստացված նախագծեր, ռեկտորատի և համալսարանի խորհրդի կողմից տրված հանձնարարություններ և ֆակուլտետի գիտաուսումնամեթոդական աշխատանքներին վերաբերող հարցեր: Ժամանակին քննարկվում և հաստատվում են մասնագիտական և կամընտրական առարկաների թեմաներն ու ուսումնական ծրագրերը: Նշեմ, որ հատկապես մասնագիտական և կամընտրական առարկաների թեմաները քննարկելիս հաշվի են առնվում ուսանողների նախասիրությունները: Նոր ուսումնական պլաններով ավելի է կարևորվում կամընտրական դասընթացների դերը, մեծացել է դրանց տոկոսային հարաբերությունը՝ նախկին 15-20-ից հասնելով 33-35 տոկոսի: Իսկ սա նշանակում է, որ ուսանողներին դասընթացների ընտրության ավելի մեծ հնարավորություններ են տրվում: Վերջինս էլ իր հերթին նպաստում է ուսանողակենտրոն ուսուցման զարգացմանը:

Լոռու մարզպետարանի, Վանաձորի քաղաքապետարանի և համալսարանի սահմանած անվանական կրթաթոշակներ են ստացել և շարունակում են ստանալ ֆակուլտետի տասնյակ ուսանողներ:

Ռուսաց լեզվի ամբիոնի ամենամյա միջոցառումներից կարելի է հիշատակել մասնակցությունը «Մոսկվայի տանե կազմակերպած կոնֆերանսներին, «Քաղաքական կրթությունե, «Ժողովրդավարությունե թեմաներով հանձնարարվող ռեֆերատներն ու դրանց քննարկումները, ամենամյա գիտական կոնֆերանս՝ նվիրված գենդերային հիմնախնդիրներին: Ռուսական բաժնի լավագույն ուսանողները արժանանում են Մոսկվայի քաղաքապետի անվանական կրթաթոշակին:

Ռուսական Բարեկենդանին նվիրված ամենամյա միջոցառում է կազմակերպում ռուսաց լեզվի ամբիոնը:

Օտար լեզուների ամբիոնը ամեն տարի կազմակերպում է *Halloween*-ին նվիրված միջոցառում:

Անշուշտ, ֆակուլտետն այդ հաջողություններից գլխապտույտների մեջ չէ. քաջ գիտակցում ենք նաև որոշ թերություններ.

1. խորհրդատուների աշխատանքը դեռևս բավարար մակարդակի չէ: Մի մասը բաեխղճորեն կատարում է իր պարտականությունները, բայց կան նաև աշխատակիցներ, ովքեր թերանում են այս աշխատանքում:

2. Ամբիոնները ավելի հետևողական պիտի լինեն դասախոսական տեքստերի և հարցաշարերի, կուրսային և ստուգողական աշխատանքների թեմաների վերանայման և թարմացման, դրանց համապատասխանության հարցերում: Չնայած այս ուղղությամբ աշխատանքներ տարվում են, սակայն թերություններ և բացթողումներ դեռ կան:

3. 412 լսարանը նախատեսված է որպես լինգաֆոնային կաբինետ, սակայն դեռևս այն լիովին չի ծառայում իր նպատակին՝ համապատասխան սարքավորումների մի մասի բացակայության պատճառով:

Հասկանալի է, որ անելիքներ շատ կան, և մեր կոլեկտիվն անում է ու կանի հնարավորինս՝ գիտաուսումնամեթոդական աշխատանքները բավարար մակարդակի վրա պահելու ուղղությամբ:

Ֆակուլտետի դեկան՝

Ա. Պողոսյան